

Ա Ռ Ա Ջ Ա Ր Կ

ԱՎԱԳ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ՏԱՐԻՔԻ ԵՐԵՒԱՆԵՐԻ ՄԵԿԱՄՅԱ ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

1. Հայաստանի Հանրապետության կառավարությունը, որպես ռազմավարական նպատակ, որդեգրել է ավագ նախադպրոցական տարիքի երեխաների համընդհանուր կրթության ապահովման պետական քաղաքականությունը: Որպես թիրախային ցուցանիշ՝ նախատեսվում է այդ խմբի երեխաների ընդգրկվածությունը 2015 թվականին հասցնել 90 տոկոսի: Այդ նպատակին հասնելու կարևորագույն պայմանը համապատասխան ֆինանսական մեխանիզմների և միջոցների ապահովումն է:

2. Մույն ֆինանսավորման վերաբերյալ առաջարկի նպատակը նշված պահանջի ապահովման մոտեցումներն ու ծախսերի գնահատման սկզբունքները ներկայացնելն է:

3. Նախադպրոցական հաստատությունները ներկայումս հիմնականում գործում են համայնքային ենթակայությամբ, և նշված ոլորտում Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի հաշվին ծառայություններ չեն մատուցվում, այլ դրանք իրականացվում են համայնքային հատկացումներից, ծնողական վճարներից, երբեմն նաև՝ միջազգային կազմակերպությունների կողմից հատկացված աջակցություններից: Համայնքների զգալի մասի եկամտային ունակությունները, սակայն, հնարավորություն չեն տալիս ապահովելու նախադպրոցական կրթության աճող պահանջարկի ֆինանսավորումը: Մյուս կողմից էլ՝ սոցիալապես խոցելի խավերի մեծ տեսակարար կշիռը (հատկապես՝ գյուղական բնակավայրերում) բացառում է ծնողների միջոցների հաշվին ֆինանսավորման ծավալների ավելացումը:

4. Հայաստանի Հանրապետության կառավարության որդեգրած նախադպրոցական կրթության զարգացման ուղղությունները, ինչպես նաև ռազմավարական ծրագրում ամրագրված ավագ նախադպրոցական տարիքի երեխաների ընդգրկվածության թիրախային ցուցանիշի ապահովումը հնարավոր չեն առանց նախադպրոցական կրթության ցանցի ընդլայնման և լրացուցիչ ֆինանսական ներդրումների կատարման: Ուստի, հանրապետության այն համայնքներում, որտեղ մանկապարտեզներ չկան, դպրոցին երեխաների պատրաստվածության բարձրացման և կրթության հավասար մեկնարկային հնարավորությունների ապահովման նպատակով ավագ նախադպրոցական տարիքի երեխաների նախադպրոցական կրթությունը կազմակերպվում է հանրակրթական դպրոցներում:

5. Այս առումով՝ օրինաչափ և արդարացված է նախադպրոցական կրթության գծով ծախսերի մի մասն իր վրա վերցնելու Հայաստանի Հանրապետության կառավարության պատրաստակամությունը, ինչն ամրագրված է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008 թվականի մարտի 13-ի նիստի N 10 և 2009 թվականի հուլիսի 16-ի նիստի N 29 արձանագրային որոշումներում: Համաձայն վերջիններիս՝ նախատեսվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորել նախադպրոցական կրթության ծրագրերի ներդրումային ծախսերը, իսկ համայնքների բյուջեների հաշվին՝ ընթացիկ ծախսերը:

6. Նախադպրոցական ծրագրերի իրականացման շարունակականության ապահովման նպատակով, ինչպես նաև ելնելով նախադպրոցական կրթության պետական չափորոշի իրացման ապահովման անհրաժեշտությունից, պետությունը ֆինանսավորում է նաև նախադպրոցական կրթական ծրագրերի իրականացման ընթացիկ ծախսերը (այսուհետ՝ կրթական ծախսեր), որոնք հաշվարկվում են՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից:

7. Նախադպրոցական կրթության ծախսերի գնահատումը հիմնվում է հետևյալ սկզբունքների վրա՝

1) նախադպրոցական կրթության ծառայությունների տարանջատում՝ ըստ կրթական, սոցիալական, խնամքի, պահպանման և հաստատության նյութատեխնիկական բազայի ամրապնդման նպատակների.

2) միջբյուջետային հարաբերությունների կառուցում՝ ծառայությունների բաժանման հիման վրա. կրթական ծախսերը ֆինանսավորվում են պետական (համայնքների) բյուջեներից, իսկ խնամքի և պահպանման ծախսերը՝ համայնքի և ծնողների կողմից.

3) ծախսերի ֆինանսավորում՝ նորմատիվներին համապատասխան. նորմատիվները մշակվում են մեկ երեխայի հաշվով՝ ըստ նախադպրոցական կրթության առանձին մոդելների.

4) ծնողական վճարների հաշվարկման, տարբերակված գանձման եղանակների և փոխհատուցումների սահմանում՝ ընտանիքի կարիքավորության աստիճանի հաշվառմամբ:

Նշված մոտեցումը նախադպրոցական կրթության չափաբաժնային, նորմատիվային, բազմաբյուր ֆինանսավորման մոդելն է:

8. Նախադպրոցական կրթության ոլորտի կայուն ֆինանսավորման ապահովման նպատակով անհրաժեշտ է՝

1) որոշել նախադպրոցական կրթության ծառայության իրական արժեքը՝ մեկ երեխայի հաշվով.

2) որոշել ավագ տարիքային խմբի երեխաների կրթական ծախսերի ծավալը՝ ընդհանուր ծախսերի կազմում.

3) մշակել նախադպրոցական կրթության ծրագրերի ֆինանսավորման տարբերակված մեխանիզմներ՝ ըստ կրթական ծրագրերն իրականացնող ուսումնական հաստատությունների կամ կազմակերպությունների.

4) որոշել ֆինանսական միջոցների ստացման աղբյուրները.

5) նախատեսել նախադպրոցական կրթության գծով համապատասխան ծախսեր՝ Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներում.

6) մշակել ժամանակացույց՝ Հայաստանի Հանրապետության մարզերում ավագ նախադպրոցական տարիքի երեխաների մեկամյա կրթության կազմակերպման ֆինանսավորման համար, հաշվի առնելով համայնքների կարիքներն ու առանձնահատկությունները.

7) ձեռնարկել միջոցներ՝ լրացուցիչ և այլընտրանքային վճարովի ծառայությունների մատուցման ունակությունների բարձրացման համար:

9. Ավագ նախադպրոցական տարիքի երեխաների կրթության կազմակերպման ծախսերը հաշվարկվում են հետևյալ սկզբունքների և ցուցանիշների հիման վրա՝

1) հանրապետությունում ավագ տարիքային խմբի երեխաների ընդհանուր թվից նախադպրոցական հաստատություններում (նախակրթական ծրագրերում) փաստացի ընդգրկվածության որոշում (2010 թվականին այն կազմում է մոտավորապես 54 տոկոս կամ 20 հազ. երեխա).

2) 2015 թվականին 5-6 տարեկանների 90 տոկոս թիրախային ընդգրկվածության հասնելու համար յուրաքանչյուր տարի ընդգրկվածության մակարդակի աճի նախատեսում՝ տարեկան մոտավորապես 7 տոկոսի չափով.

3) երեխաների տարեկան ընդգրկվածության աճի ապահովում՝ նաև գործող մանկապարտեզների բեռնվածության մեծացման հաշվին՝ 2010 թվականի փաստացի 77.4 տոկոսից 2015 թվականին այն հասցնելով 90 տոկոսի (տարեկան 2.5 տոկոս աճի նախատեսում).

4) յուրաքանչյուր նոր բացվող խմբի համար ներդրումային ծախսերի նախատեսում՝ ելնելով հաստատության տեխնիկական և միջավայրի ապահովվածության վիճակից, որը միջինում գնահատվել է 4,2 մլն դրամի չափով.

5) ընթացիկ ծախսերի նախատեսում՝ ըստ նախադպրոցական կրթության կազմակերպման մոդելների, ելնելով մեկ երեխայի կամ խմբի հաշվով նախադպրոցական կրթու-

թյան ծառայության արժեքից (օրինակ, մեկ խմբի հաշվով (ընդունելով խմբի միջին խտությունը՝ 25 երեխա) ընթացիկ ծախսերը 8-9-ժամյա ռեժիմով գործող մանկապարտեզի համար գնահատվել են շուրջ 10.1 մլն դրամ, իսկ 3.5-4-ժամյա նախակրթական ծրագրի համար՝ մոտավորապես 2.7 մլն դրամ)։

6) ընթացիկ ծախսերի տարանջատում՝ ըստ կրթական և խնամքի ու պահպանման ուղղությունների, և համապատասխան ծախսերի նախատեսում՝ Հայաստանի Հանրապետության պետական և համայնքների բյուջեներում։

10. Նախադպրոցական կրթության կիրառվող մոդելի ձևը (օրինակ, 8-9-ժամյա ռեժիմով մանկապարտեզ, 3.5-4-ժամյա նախադպրոցական ծրագրի կազմակերպում և այլն) կախված է յուրաքանչյուր համայնքի (հաստատության) հնարավորություններից և կարիքներից (մանկապարտեզի առկայությունը, շենքային պայմանները, նյութատեխնիկական, ուսումնամեթոդական բազան և այլն)։

11. Ներդրումային ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ նպատակային ֆինանսավորման ձևով, որը բխում է Հայաստանի Հանրապետության կառավարության 2008-2015 թվականների նախադպրոցական կրթության ռազմավարական ծրագրի սկզբունքներից և դրա հետագա ընթացքի վերաբերյալ առաջարկություններից։ Ներդրումային ծախսը հատկացվում է ծրագիրն սկսելու առաջին տարում և ապահովում է ծրագրի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ստեղծումը (մասնավորապես, վերանորոգում, գույքի և սարքավորումների, ուսուցողական նյութերի և ուսումնադիդակտիկ պարագաների ձեռքբերում և այլն)։ Ներդրումային ծախսերը հատկացվում են ինչպես հանրակրթական դպրոցներում (կամ համայնքների հարմարեցված տարածքներում), այնպես էլ՝ մանկապարտեզներում նոր ձևավորվող խմբերի համար։

12. Կրթական ծախսերը, ելնելով նախադպրոցական կրթության պետական չափորոշիչ իրացման ապահովման անհրաժեշտությունից, ֆինանսավորվում են Հայաստանի Հանրա-

պետության պետական բյուջեի միջոցների հաշվին՝ անկախ նախադպրոցական կրթության կազմակերպման մոդելից, և հաշվարկվում են՝ ելնելով ըստ աշակերտների թվի ֆինանսավորման բանաձևով մեկ սովորողին ընկնող տարեկան գումարի չափից:

13. Հաշվարկելով յուրաքանչյուր տարի նոր բացվող խմբերի և դրանցում ընդգրկվող երեխաների թիվը՝ որոշվում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեում նախադպրոցական կրթության գծով անհրաժեշտ ծախսերի չափը:

14. Ծախսերի ֆինանսավորման այս մեխանիզմը Հայաստանի Հանրապետության մարզերում աստիճանական ներդրման միջոցով հնարավորություն կտա 2015 թվականին հասնելու թիրախային ընդգրկվածության 90 տոկոսի ցուցանիշի:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ



Դ. ՍԱՐԳՍՅԱՆ